<<Նոր ժամանակների կրթություն>> ՀԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Լ. Գալուստյան

Ուսումնական հաստատություն՝ <<Արտաշատի ավագ դպրոց>> ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

1. Բովանդակություն……1
2. Ներածություն……2
3. Բարոյական արժեքների ձևավորումը……..3
4. Արժեքների բնութագրերը դպրոցում……5
5. Հոգևոր բարոյական արժեքների նշանակությունը……6
6. Ինքնուրույն աշխատանք……8
7. Ինքնուրույն աշխատանք……9
8. Բարոյական արժեքների արդի վիճակի վերլուծությունը և փաստացի պատկերը……..10
9. Եզրակացություն…….....11
10. Օգտագործված գրականության ցանկ……..12

Ներածություն

Նպատակները և հետազոտական հարցը

1.Բարոյական արժեքների հայցեկարգը

2.Բարոյական արժեքների դասակարգումը

3.Բարոյական արժեքների դասակարգման խնդիրը

4.Կրթությունը որպես համամարդկային արժեք

5.Սովորողների մեջ բարոյական արժեքների ձևավորելը

6.Բարոյական արժեքի ձևավորում սովորողի մոտ

7.Ժամանակների փոփոխությունների գնահատում

Հետազոտական հարց

Ինչպե՞ս ձևավորել բարոյական արժեքներ սովորողի մոտ:

Բարոյական արժեքների ձևավորումը

Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը սովորողի մոտ, իսկ ի՞նչ է արժեք ասվածը:

Արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին չենք վճարել: Այն հնարավոր չէ ստանալ հեշտությամբ: Այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ և գիտակցել:

Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ և իմաստավորում կյանքը:

Սովորողների դաստիարակության իևրականացումը, նրանց առաքինի դարձնելը և նրանց մեջ բարոյական արժեքներ ձևավորելը միշտ եղել և մնում է կրթության կարևորագույն խնդիրներից մեկը:

Ժամանակակից կրթության համակարգում տեղի ունեցող խոշոր փոփխությունների, նոր ուսումնական փորձի և ծրագրերի ներդրման վերջնական նպատակն է բարենպաստ պայմանների ստեղծումը անձի զարգացման համար՝ հաշվի առնելով նրա հետաքրքրությունները և ունակությունները:

Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեքային համակարգի կարևորագույն մասը:

Հանրակրթության պետական կրթակարգում և հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչներում որոշակի ուշադրություն է դարձվում բարոյական արժեքներին (տես 11-12):

Բարոյական դաստիարակությունը պետք է իրականացնել ոչ թե աշակերտների վարքի մեջ այս կամ այն շեղում նկատելիս համապատասխան խրատներ տալով, այլ յուրաքանչյուր առարկայի դասավանդման ընթացքում դաստիարակության բովանդակությունը կազմող արժեքների հետևողական ձևավորման միջոցով:

Բարոյական արժեքների ձևավորման մեծ ներուժ ունեն հանրակրթական դպրոցի հայոց լեզու և գրականություն բնագավառի առարկաները:

Գրականության դասավանդման գործընթացի միջոցով անդրադառնում ենք արդարության, առաքինության բարոյական արժեքների ձևավորման խնդիրներին:

Բազմաթիվ եղանակներ կան, որոնց միջոցով ուսուցիչը կարող է ձևավորել բարու արժեքը:

Գրականության դասագրքերում տրված են լինում այնպիսի ստեղծագործություններ, որոնք ուսուցչին հնարավորություն են տալիս խոսելու բարի արժեքների և բարու հատկանիշների մասին:

Օրինակ՝ Թումանյանի <<Անուշ>> պոեմը, Իսահակյանի <<Աբու-Լալա Մահարի>> պատմվածքը:

Բարոյական հատկանիշներից է առաքինությունը: Առաքինության մասին առաջին ուսմունքը զարգացրել է Արիստոտելը:

Նա առաքինությունը դիտում է որպես 2 ծայրահեղ արմատների լիառատության և պակասության միջև ընկած ոսկե միջին:

Ըստ Ֆրանկլինի առաքինությունը պետք է չափել հաջողության հասնելու համար նրա օգտակարությամբ:

Արժեքների բնութագրերը դպրոցում

Դպրոցական արժեքները նպատակ ունեն նպաստելու մարդու վարքը վաղ տարիքից առաջնորդելուն որպես մարդ՝ հասցնելով սոցիալական աճի և կատարելագործման:

Դպրոցական արժեքները կարող են լինել անհատական կամ կոլեկտիվ: Այդպիսիք են՝ ճշտապահությունը, հարգանքը, որը արժեք է՝ հիմնված էթիկայի և բարոյականության վրա:

Հնազանդությունը ևս բարոյական արժեք է, որը համապատասխանում և ընդունում է ժամանակի իշխանություն ունեցող անձի կամքը:

Հնազանդության օրինակ է ուսուցչի տված ցուցումներին և օրինակներին հետևելը:

Պատասխանատվությունը սահմանվում է որպես պարտավորության կամ պարտականության կատարում՝ լինի դա սոցիալական, գիտական կամ բարոյական:

Ճշտապահության արժեքը հրավիրում է ձեզ կատարելու սահմանված կամ նախատեսված ժամկետում ատանձնած պարտավորությունները:

Հանդուրժողականությունը շրջապատում գտնվող մարդկանց գաղափարները, մտքերի, վարքի և նախասիրությունների ընդունումն է:

Լավագույն օրինակը դասընկերներին ընդունելն է:

Հոգևոր բարոյական արժեքների նշանակությունը

Բարձրագույն արժեքներ են հոգևոր բարոյական արժեքները՝ տրված Աստծո կողմից, հաստատված Քրիստոսի պատվիրաններով, ուսուցումներով:

Մարդը բնության մի մասնիկն է, կենդանիները՝ ևս: Սակայն եթե մարֆիկ ուղղորդվում են բնական բնազդով, ապա անպատասխան կմնա՝ <<Ո՞րն է մարդկանց և կենդանիների տարբերությունը>> հարցադրումը: Այդ տարբերություն ասվածը հենց բանականությունն է:

Բարոյական արժեքների ձևավորումը սկսվում է երեխայի ծնվելու հետ միաժամանակ և իրականացվում է ողջ կյանքի ընթացքում: Այդ գործընթացին մասնակցում են ընտանիքը, միջավայրը, եկեղեցին, ՏՀՏ և հանրակրթական դպրոցը:

Այլ կրոններ կամ պետական համակարգեր ևս ունեն բարոյական արժեքների մղող օրենքներ ու պատվերներ, սակայն քրիստոնեության բարոյական արժեքներն անհամեմատ վեր են մնացյալ բոլորից:

Քրիստոնեությունը խոսում է աստվածային շնորհից, որով մարդն իր կամքով , գործակից լինելով աստվածային նախախնամությանն ու զորակցությանը, կարողանում է ապրել բարոյական ու առաքինի կերպով, իսկ սայթաքելու դեպքում էլ մաքրվել ու սրբվել կատարված մեղանչումներից:

Մինչդեռ միայն օրենքի հաստատումը այս շնորհն ու զորությունը չի տալիս մարդուն:

Քրիստոնեությունըբարոյականության համար անհրաժեշտ արտաքին դրսևորումները փոխադրեց ներքին արտահայտման մեջ՝ մեղքը դիտարկելով մարդու հոգևոր ներաշխարհում:

Դրա համար է, որ Քրիստոս բարկությունը կարծես համարժեք համարեց մարդասպանությանը, իսկ կնոջը ցանկությամբ նայելը՝ շնությանը: (Մատթ. 5. 21-22, 27-28):

Սուրբ Ներսես Շնորհալին <<Հավատով խոստովանիմ>> խորագրով իր քսանչորս աղոթքներից մեկում խնդրում է, որ Աստված իրեն զորություն տա, որպեսզի աչքերը չնայեն արատավոր բաների, և ականջները չլսեն մեղսալի, անպարկեշտ, չար խոսքեր:

Քրիստոնեությունն անգամ լսելու և տեսնելու մեջ է դնում բարոյական սկզբունքներ՝ ի տարբերություն այլ օրենքների, որոնք ուշադրություն են դարձնում միայն արտաքին արարքների, արտաքին գործողություններին:

Այսօր ոչ միայն մարդկանց հետ հաղորդակցության մեջ, այլև հաճախ համացանցից օգտվելիս, հեռուստացույց դիտելիս կանգնում ենք այն անցանկալի իրողության առջև,

որը շեշտել էր Ներսես Շնորհալին՝ անպարկեշտ, մեղսալի բաներ տեսնելու կամ լսելու վտանգը: Պետք է զգոն լինել. առօրյայի, ներկա տեղեկատվության ու զվարճանքների հորձանուտում գայթակղություններ, մեղսալի տեսարաններ են աչքի զարնվում, բայց այլ է դրանց հանկարծակի աչքի ընկնելը, և այլ է, երբ մարդը հավանություն է տալիս այդ երեխաներին, որոնք մանուկներին անհասկանալի կարող են թվալ, այլ զորացնել նրանց հավատքը: Սրա ակնարկը տեսնում ենք Պողոս Առաքյալի խոսքի մեջ. <<Իբրև մանուկների ի Քրիստոս կաթ տվեցի ձեզ և ոչ՝ կերակուր, քանի որ դեռ կարող էլ էինք>> (Ա Կորնթ. 3.2):

Եթե կրոնը լիներ միայն բարոյական պահանջներ ներկայացնող, ապա այդ դեպքում քրիստոնեությունը կվերածվեր սովորական բարոյագիտության կամ բարոյական, էթիկական ուսուցումների համակարգի: Մինչդեռ հավատքի զորացումը բերում է Աստծո վեհ, առաքինի, բարոյական պատվիրանների համաձայն ապրելու վճռականությունը, ինչպես նաև շնորհը և ուժը այդ պատվիրաններով ապրելու համար:

Պե՞տք է արդյոք ծնողներն առաջին հերթին հատկապես բարոյական բարձր արժեքներ սերմանեն իրենց երեխաների մեջ:

<<Հոգին է կենդանարար>> (Հովհ. 6.64): Հոգին է, որ մարմնին կենդանություն է տալիս: Եվ ինչպես, Եղիշե պատմիչի խոսքերով, հոգին առավել է, քան մարմինը, այդպես էլ պետք է առավել ջանադրություն ցուցաբերել հոգևորի համար: Այդ պատճառով Հայ Առաքելական Եկեղեցին ճիշտ է համարում մանկամտությունը, երեխաների հոգևորի համար ծնողների հոգալը դեռևս վաղ հասակից:

Ինքնուրույն աշխատանք

1. Առօրյայում Ձեզ շատ ծանոթ հասկացությունների շարքում շատ կիրառելի է եզրույթ է «բարոյականությունը»: Ի՞նչ եք հասկանում այդ ասելով, և ինչ պատեհ առիթների ժամանակ եք այն օգտագործում:

2. Տվեք բարոյականության գիտական հիմնավորումը: Ներկայացրեք ժամանակակից բարոյագիտական մոտեցումներ (պրագմատիստական, պոզիտիվիստական, նեոֆրեյդիստական և այլն) :

3. Սահմանիր «բարոյական գիտակցություն» հասկացությունը: Այն բնորոշ է բոլոր մարդկանց, սակայն այն ունի արտահայտման տարբեր ձևեր: Դրանք ձևավորում են մարդու վարքագիծը: Դու նույնպես ունես բարոյական հայացքներ և արժեքներ, որոնց միջոցով ղեկավարում ես քո վարքագիծը:

4. Սահմանիր «բարոյական վարքագիծը»: Նշիր քեզ բնորոշող բարոյական հատկա¬նիշներից ամենացայտուն արտահայտվողները:

5. Ինչպե՞ս ես գնահատում դրանց ազդեցությունը քո և շրջապատի հարաբերությունների վրա:

6. Ինչը՞ կամ ո՞վ է օգնել քո բարոյական աշխարհայացքի ձևավորմանը:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ:

Բարոյական, հոգևոր և գեղագիտական դաստիարակության բաղադրիչների փոխկապվածությունը, դրանց ինտեգրացված ձևավորման սկզբունքների ուսումնասիրությունը օրինակելի-դասի նախագծի միջոցով: Բարոյական արժեքների ձևավորմանը միտված դասերի կազմակերպման մեթոդները, մտածողության տարբեր ձևերի զարգացումը: Դասի ամբողջական ալգորիթմ սխեմայի ձևավորումը՝ ըստ առանձին բարոյական արժեքների ձևավորման նպատակադրման: Դասի բովանդակության կապը կյանքի հետ: Էվրիստիկ և կատեխիզիկ զրույցների, բանավեճերի կազմակերպմանան առանձնահատկությունները: Ներկայացնել դաս-պլաններ ընտրված թեմաներով:

Ինքնուրույն աշխատանք

1. Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ մարդու բարոյական վարքագիծը կյանքի տարբեր ոլորտների վրա՝ ընտանիք, մասնագիտություն, քաղաքական և հասարակական գործունեություն:

2. Ի՞նչ դրական փոփոխություններ կցանկանայիր լինեին քո ընտանիքի, դպրոցի, քաղաքի, պետության կյանքում: Ինչո՞վ կարող ես նպաստել ինքդ, այդ փոփոխությունների ձևավորմանը:

3. Ի՞նչ դեր ունի բարոյական գիտակցությունը, որպես հաջողության գրավական, քո մտածողության մեջ:

4. Ի՞նչ տրամաբանական կապ կարող ես գտնել կամքի և բարոյականության միջև:

5. Ի՞նչ գիտես Աստվածաշունչ մատյանի մասին: Գնահատե՞ք դրա դերը ազգային բարոյական արժեհամակարգի ձևավորման գործընթացում:

6. Ինչպե՞ս է արտահայտվում փոխկապվածությունը բարոյական և գեղագիտական արժեհամակարգերի միջև:

7. Ինչպե՞ս է արտահայտվում փոխկապվածությունը բարոյական և տնտեսական արժեհամակարգերի միջև:

Առաջադրանքներ 1-4, թեմաների վերաբերյալ

Սահմանեք վերոնշյալ բարոյական որակները (կարող եք օգտվել բարոյագիտական բառարանից); հասկացությունները՝ հոգեկանի բարձրագույն զգացումների և դաստիարակության տեսանկյուններից.

- «բարոյական վարքագիծ»
- «բարոյական աշխարհայացք»
- «բարոյական գիտակցություն»
- «բարոյական հարաբերություն»:

Թեմա 1, 2, 3-ը ընթերցելու ընթացքում.

«_» նշանով նշիր այն հատվածները, որոնք չեն համապատասխանում քո իմացածին; «*» ՝ համապատասխանում են քո իմացածին; «+»՝ նորություն էին քեզ համար; «?»՝ անհասկանալի են կամ վիճելի:

Մատուցվող նյութի մասին նորությունները վերլուծիր տանը, հագեցրու օրինակներով: Քննադատիր այն դրույթները, որոնք չեն համապատասխանում քո հայացքներին:

Բարոյական արժեքների արդի վիճակի վերլուծությունը և փաստացի պատկերը

Սովորողների 25% կարծում էր, որ հին ավանդույթները կարելի է պահպանել, բայց անհրաժեշտ է նաև որոշ բաներ փոփոխել, քանի որ աշխարհը փոխվում է, և այսօրվա աշխարհին ոչ բոլոր ավանդույթներն են համապատասխանում, նաև կտրուկ քայլերի գնալու փոխարեն կարելի է ավելի մանրամասն ամեն ինչի մասին մտորել, ոչ թե թողնել, որ զգացմունքները տիրեն:

20%ը կարծում է, որ հայերի բարձր բարոյականությունը նրանց գեների մեջ է: Հայերի մշակույթը, փիլիսոփայությունը, տիեզերագիտությունը, մի խոսքով՝ հայկական քաղաքակրթությունը զարգացել են շատ վաղ:

Սովորողների 20%ը պնդում էր, որ անհրաժեշտ է պահպանել ազնվությունը և սկզբունքները, որոնց շնորհիվ էլ ձևավորվում են բարոյական արժեքները:

Սովորողների 20%ը կարծում էր, որ բարոյական զարգացումը կարևոր գործընթաց է, որը պետք է սկսի վաղ մանկությունից:

Հետևելով բարոյական արժեքներին՝ երեխաները կարող են զարգացնել լավ բնավորություն:

Երեխայի ընտանիքը կարևոր դեր է խաղում:

Սովորողների 15%ը կարծում էր, որ գրականությունը դաստիարակիչ է, այն ձևավորում է երեխայի տեսկետը կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ, օգնում է լավատես մնալ բոլոր իրավիճակներում, հանդիսանում է ուղեցույց, շատ գրական հերոսներ դառնում են սովորողի համար օրինակ, իդեալ:

Գրքերի պատմությունները երեխային սովորեցնում են ազնվություն, արդարություն:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար:

Գալով հազարամյակների խորքերից՝ հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով և ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմություն և մշակույթ:

Հայ գրականությունը մեծ հնարավորություն է տալիս իրականացնելու մեր ազգային իղձերը, ձևավորելու և պահպանելու հայի կերպարը:

Մեր գլխավոր խնդիրն է ազգային և համամարդկային արժեքների իմացության և արժևորման միջոցով նպաստել աճող սերնդի ազգային նկարագրի ամբողջացմանը:

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշգրիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է , որն իր մեջ կկրի իր ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգայինը:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1.Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործում, Երևան, 2002թ.:

2.Երևանի պետական համալսարան, Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016թ.:

3.Հայ գրականության պատմություն, երկրորդ գիրք, Երևան, 1950թ.:

4.<<Բարոյական արժեքների հայեցակարգ>> հասկացությունում: